Կարգապահական գործ թիվ ԿԳ-21003

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի մայիսի 04-ի թիվ 266-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/159-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՂԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Մանե Կարապետյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Մարինե Ֆարմանյանի, Կարեն Մեժլումյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Լիլիթ Ղազանչյանի, Արսեն Հարությունյանի և Պավել Գյուլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Գեղամ Հարությունի Մարգարյանին (արտոնագիր՝ 578) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Մարիաննա Սահակյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ իր և փաստաբան Գեղամ Մարգարյանի **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** միջև կնքվել է փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ երեք պայմանագիր:

Դիմողը նշել է, որ փաստաբանը պայմանագրերով նախատեսված պարտավորությունները անավարտ թողնելով՝ առանց ծանուցելու դադարեցրել է պայմանագրերը, այն դեպքում, երբ Դիմողի կողմից ամբողջությամբ վճարված է եղել փաստաբանական ծառայությունների մատուցման համար նախատեսված գումարը:

Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբանը շաբաթներ շարունակ չի պատասխանել իր հեռախոսազանգերին, չի վերադարձրել գործի նյութերը:

Վերոգրյալի հիման վրա՝ Դիմողը խնդրել է փաստաբան Գեղամ Մարգարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցել, վերադարձնել գործի նյութերը և իր կողմից վճարված գումարը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 14.01.2021թ. թիվ 3-Ա/ԿԳ-21003 որոշման հիման վրա փաստաբան Գեղամ Մարգարյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք) 3.5.5, 3.6.1, 3.8.3 և 3.8.4** ենթակետերի խախտման հատկանիշներով:

19.01.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Մարինե Թովմասյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

Փաստաբանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 22.03.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 25.03.2021թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 04.05.2021թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 13.08.2019 թվականին և 06.02.2020 թվականին Գեղամ Մարգարյանի և Մարիաննա Սահակյանի միջև կնքվել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրեր: *Սույն փաստը հաստատվում է համապատասխանաբար 13.08.2019թ. և 06.02.2020թ. պայմանագրերի պատճեններով:*
2. Դիմողը Փաստաբանին 06.02.2020թ. և 18.06.2021թ. լիազորել է հանդես գալ իր անունից: *Սույն փաստը հաստատվում է համապատասխանաբար 06.02.2020թ. և 18.06.2020թ. լիազորագրերի պատճեններով:*
3. Փաստաբանի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան և ընդհանուր իրավասության դատարան, որոնք ստացել են ՎԴ/5698/05/19 և ԵԴ/26044/02/19 համարները: *Սույն փաստը հաստատվում է դատալեքս տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*
4. 26.03.2021թ" Մարիաննա Սահակյանը, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ իր և փաստաբան Գեղամ Մարգարյանի միջև տարաձայնությունները հարթվել են և վերջինս շարունակում է ներկայացնել իր շահերը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից 26.03.2021թ. ներկայացված գրությամբ:*

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Գեղամ Մարգարյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 20.10.2006թ., և 2014-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է երկու կարգապահական վարույթ: Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գեղամ Մարգարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը,*

ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:*

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Կանոնագրքի 3.5.5, 3.6.1, 3.8.3, և 3.8.4 ենթակետերի խախտման հատկանիշներով՝ Մարիաննա Սահակյանին ազնիվ և բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, փաստաթղթերը չվերադարձնելու, առանց Դիմողին ծանուցելու պայմանագրով նախատեսված պարտավորությունները դադարեցնելու և պայմանագրով նախատեսված գումարը ետ չվերադարձնելու վարքագիծը ստուգելու փաստերի առթիվ:

Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր փաստաբանի կողմից վերոնշյալ վարքագծի կատարումը, հետևաբար Դիմողը պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն ի փաստաբանի օգտին:

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերին (պայմանագիր և լիազորագիր), ապա դրանցից բխում է, որ փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը, սակայն այդ փաստաթղթերով չի հաստատվում փաստաբանի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5, 3.6.1, 3.8.3 և 3.8.4 ենթակետերը խախտելու հանգամանքը:

Խորհուրդը նաև ի գիտություն է ընդունում, որ 26.03.2021թ" Մարիաննա Սահակյանը, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ իր և փաստաբան Գեղամ Մարգարյանի միջև տարաձայնությունները հարթվել են և վերջինս շարունակում է ներկայացնել իր շահերը:

Վերոնշյալ հիմք ընդունելով Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.5.5, 3.6.1, 3.8.3 և 3.8.4 ենթակետերի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ, 39.7 և 39.8 հոդվածների պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գեղամ Հարությունի Մարգարյանի (արտոնագիր՝ թիվ 578) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Գեղամ Հարությունի Մարգարյանին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մանե Կարապետյան

04 մայիսի 2021թ.
թիվ ԿԳ/159-Ա
ք. Երևան